ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

ՄԱՅԻՍԻ 30, 2026 Թ.

Ուղղություն

Երևան → Սյունիք / Որոտնավանք, Սվարանանց Հազարափրկիչ եկեղեցի / → Տաթևի վանք → Երևան

Ուխտավորների միավորման ժամ

մոտավորապես ժամը 15:00, Տաթևի վանք

Ուխտագնացության առանցքային պահ

Համատեղ աղոթք Սուրբ Պողոս-Պետրոս տաճարում՝ Սյունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Մակար եպիսկոպոս Հակոբյանի օրհնությամբ, Տաթևի վանական համալիրի վանահայր Հոգեշնորհ Տեր Սահակ վարդապետ Ծաքարյանի և Սյունյաց թեմի հոգևորականների մասնակցությամբ:

Ուխտագնացության ընդհանուր խորհուրդը

Այս ուխտագնացության խորհուրդն է՝ անդրադառնալ սիրո, մարդկայնության, գթասրտության և փոխադարձ աջակցության արժեքներին. աղոթել խաղաղության, մեր ժամանակների պատերազմներում զոհվածների հոգիների հանգստության և ապօրինի պահվող բոլոր գերիների շուտափույթ ազատ արձակման համար: Սա առիթ է վերստին զգալու մարդկային կապը և հիշեցնելու ինքներս մեզ մեր պատասխանատվության մասին՝ պահպանելու լույսի, արժանապատվության ու մարդասիրության վրա հիմնված աշխարհը մեր երեխաների և գալիք սերունդների համար:

Ուխտագնացության շրջանակում նախատեսվում է նաև բարեգործական նախաձեռնություն՝ ուղղված Տաթևի երեխաների համար «Կենդանի փեթակ» կրթական խաղահրապարակի ստեղծմանը:

Ուխտագնացության վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է https://pilgrimage2tatev.am/ կայքում:

Ուխտագնացության համակազմակերպիչներ՝

Տաթևի համայնքապետարան

ԾՐԱԳԻՐ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

TREE OF LIFE

Մայիսի 30

I. ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐ

Օրվա մեկնարկ Երևանում

06:30–07:00 Հավաք Երևանում՝ Մատենադարանի հարակից տարածքում

07:00 Մեկնում Երևանից

09:40–10:00 Կարճատև կանգառ Վայքում (սուրճի և արագ սննդի հնարավորությամբ)

II. ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Ուղղություն 1. Սվարանց, Հազարափրկիչ եկեղեցի

12:40–13:00 Ժամանում Սվարանց

- Կանգառի ծիսակարգ (մոտ 60 րոպե) մոմավառություն և աղոթք, օրհնության խոսք
- շրջայց Սվարանցի նոր թաղամասում՝ որպես վերածնվող համայնքի խորհրդանիշ, թեյախմության հյուրասիրություն Թուֆենկյան հիմնադրամի կողմից:

14:00 Ծարժ դեպի Տաթև

14:40 Ժամանում Տաթև

Ուղղություն 2. Որոտնավանք

11:45–12:15 Ժամանում Որոտնավանք

- Կանգառի ծիսակարգ (մոմավառություն և աղոթք, օրհնության խոսք, հոգևոր երգեցողություն)

13:00–13:30 Ծարժ դեպի Տաթև

14:15–14:45 Ժամանում Տաթև

14:40–15:00 **Ընդհանուր հավաք և խմբերի միավորում Տաթևի վանքում**

(ընդհանուր խմբին են միանալու նաև Սատանի կամուրջ → Տաթևի Մեծ անապատ → Տաթևի վանք քայլքով ուխտագնացության մասնակիցները: Նրանք կրելու են Արցախի յոթ վանքերի և Տաթևի պատկերներով շապիկներ՝ «Կենաց ծառ» տարբերանշանով: Այս խորհրդանշական քայլի նպատակն է ուշադրություն հրավիրել Արցախի եկեղեցիների, սրբավայրերի և մշակութային ժառանգության պաշտպանության անհրաժեշտության վրա:)

ԾՐԱԳԻՐ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

15:00–15:30 Համատեղ աղոթք Սբ. Պողոս-Պետրոս տաճարում

15:30–16:00 Մատաղի օրհնություն և բաշխում

16:00–18:00 Զուգահեռ ծրագրային միջոցառումներ Տաթևի վանքի տարածքում(մասնակցությունը՝ ըստ ցանկության)՝

- Հոգևոր և ճանաչողական զրույցներ ու հոգևոր երգեցողություն՝ «Արմատների պահապաններ» շրջանակում,
- «Երևանի ձայներ» երգչախմբի կատարումները վանքի թանգարանային սրահում,
- «Ծնվել եմ Արցախում» ծրագրի շահառու պատանի երաժիշտների կատարումները Ձիթհանում
- Վարպետաց դաս՝ «Ծաղկելու արվեստ» (թանգարանային սրահ)
- «Կենդանի փեթակ» ստեղծագործական վարպետաց դաս Հալիձորի երեխաների մասնակցությամբ

18:00 Երեկոյան ժամերգություն Սբ. Պողոս-Պետրոս տաճարում

18:00–18-30 Վերադարձի մեկնարկ դեպի Երևան

Թող Տաթևի վանք ուխտագնացությունը դառնա աղոթքի, հոգևոր նորոգման, միասնության և բարի գործի ճանապարհ բոլոր մասնակիցների համար:

ՀԱՐՑԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Մինչև ուխտագնացության մեկնարկը հարցերի դեպքում կարող եք զանգահարել հետևյալ համարներով՝

091 191367, 097 272027

Ուխտագնացության օրը՝ ճանապարհին և Տաթևի վանքի տարածքում, խնդրում ենք հարցերի դեպքում դիմել ձեզ ուղեկցող կամավորներին: Տաթևում ձեզ կուղղորդեն նաև տեղում գործող կամավորները:

Շնորհակալ ենք փոխըմբռնման, կարգապահության և միմյանց նկատմամբ ուշադրության համար: